

ՍՈՎՈՐՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԵՍՍ. ԺԱՄԿՈՉՅԱՆ

Հասարակութիւնն իրավական նորմեր է ձևավորում մարդկանց խաղաղ համակեցութիւնը և համատեղ գործունեութիւնն ապահովելու համար: Պատմականորեն այդ նորմերը համապատասխանում են հասարակութիւնի տեսակին և արտահայտում են տվյալ հասարակարգում անհատների ու խմբերի հարաբերութիւնները: Հասարակութիւնի կազմը, չափերը, ներքին կառուցը և այլ հասարակութիւնների հետ արտաքին կապերի տեսակները ժամանակի մեջ փոփոխվում են և պայմանավորում են այդ փոփոխարարութիւնների նորմերի փոփոխութիւնները: Նախնական ձևի մեջ իրավական նորմերն անձի և հանրութիւնի միջև այն հարաբերութիւններն են, երբ հասարակութիւնն իրականացնում է անձի ապահովութիւնը և որոշակի սահմաններում գործելու ազատութիւնը¹:

Իրավական նորմերն ունեն պահպանողական բնույթ, քանի որ կապված են մարդկային հոգեբանութիւնի ամենանախնական հիմքերի՝ բնազդների հետ: Ինքնապահպանման և սերնդի պահպանման բնազդներն ստիպում են մարդկանց որոշակի ժամանակաշրջանում երկարատև պահպանել ընդունված վարքի ձևերը, քանի որ դրանց խախտումն սպառնում է ապահով կյանքի ընթացքին: Բանավոր փոխանցվող ավանդույթի դեպքում մի քանի սերնդի ընթացքում որևէ նորմի ընդունման դրդապատճառը և նպատակը մոռացվում են և նորմերը պահպանվում են սովորույթի ձևով, ներառյալ նորմերը խախտողների համար նախատեսված տույժերն ու պատիժները: «Անորոշ» (իրականում՝ մոռացված) աղբյուրից եկող կանոններն ինքնաբերաբար ստանում են սրբազանութիւնի կարգավիճակ, դրանց ծագումը կամ չի քննարկվում (հասարակ համակեցութիւնի կանոնների դեպքում) կամ վերագրվում է աստվածային ակունքներին (մարդկային խմբի գոյատևման համար առավել անհրաժեշտ կանոնների դեպքում): Կրոնական և քաղաքական-գաղափարախոսական պատկերացումների ընթացքը դրանց մի մասն ամրապնդում կամ չեզոքացնում է: Այստեղից հետևում է, որ առավել հին և նախնական են հասարակութիւնի մեջ այն կանոնները, որոնք ապահովում են գոյատևումը և վերարտադրութիւնը, այսինքն նրանք, որոնք վերաբերում են ընտանիքին, սննդին և բնակութիւնի տեղանքի բարիքների օգտագործմանը: Կախված տվյալ էթնոսի նախնական

¹ Г. Спенсер, Происхождение нравственности, СПб, 1914, с. 149-167, П. Бурдые, Социология социального пространства, СПб, 2007, с. 19.

կացութեան (առաջին հերթին՝ քոչվոր կամ նստակյաց) և սնունդ հայթայթելու հնարներից (որսորդություն, հավաքչություն, անասնապահություն, երկրագործություն) ձևավորվում են ինքնապաշտպանություն, փոխօգնություն, սննդի բաժանման, կանանց փոխանակության (ամուսնություն), տարածքների բաժանման և դիֆերենցված օգտագործման և այլ պայման-կանոններ, որոնք երկար պահպանվում են «պապերի» հեղինակության ինքնապաշտպանության և ի վերջո ընկնում են սովորութային իրավունքի հիմքում: Հատկապես նստակյաց կենսաձևի դեպքում, երբ որոշ տարածքների (օրինակ՝ ջրային ռեսուրսների, անտառի, արոտավայրերի) համատեղ օգտագործումն անխուսափելի է կամ բխում է հասարակության կարիքներից և երբ փոխօգնությունը (համատեղ ինքնապաշտպանությունը, որսը կամ թալանի նպատակով հրոսակային հարձակումը, ցանքսը, բերքահավաքը) պարտադիր պայման է հանրության գոյատևման համար, պայման-կանոնները համախմբում են հասարակությանը և դարձնում մեկ գործող օրգանիզմ¹: Հետևաբար, այդ օրգանիզմի կենսագործունեության խախտումներն ընկալվում են ոչ միայն որպես հանցագործություններ (այսօրվա տեսակետից հանցագործությունն արխաիկ հասարակության մեջ կարող է լինել կենսաձևի բաղադրատարր), այլև որպես աստվածային կարգի խախտում: Այս դեպքում գործում է հանրության ինքնապահպանման մեխանիզմը՝ ինքնազտումն օտար տարրերից, ինչը ժամանակակից տեսակետներից կարող է ընկալվել որպես վայրենաբարոյություն կամ դաժանություն: Իհարկե, այսպիսի հասարակություն-օրգանիզմի ինքնամոփոխությունը և օտարների ու որևէ նոր տարրի հանդեպ զգուշավոր կամ թշնամական վերաբերմունքը նույնպես նորմ է:

Եթե այդպիսի հասարակության մեջ հայտնվում է նոր մարդկային խումբ, ապա այն պետք է գտնի իր համապատասխան տեղը գործող օրգանիզմում, ժամանակի ընթացքում ներգրավվելով ընդհանուր կենսագործունեության ընթացքի մեջ՝ ստանալով ընդհանուր սեփականության իր բաժինը: Եթե բնական կամ բռնի ճանապարհներով երկու այդպիսի հասարակություն-օրգանիզմներն ապրում են կողք-կողքի և կազմում են նոր միավորում, ձևավորվում են նոր որակի պայման-կանոններ, որոնք կարգավորում են նաև երկու խմբերի փոխհարաբերությունները²: Այս դեպքում գոյություն կարող է ունենալ որոշակի տարբերություններ խմբերի ներքին կանոնների միջև, որոնց հանդեպ ընդհանուր կանոնները կազմում

¹ Г. Спенсер, Синтетическая философия, Киев, 1997, с. 287.

² Հմմ. շերենտե ժողովրդի ներքին բաժանումը և ամուսնական կարգերը. К. Леви-Строс, Структурная антропология, М., 2001, с. 126-130.

են մետականոնի (բաղադրյալ կանոնի, գերկանոնի) նոր մակարդակ: Սովորաբար, երկու խմբերից մեկը դիտվում է որպես ավելի բարձրակարգ, մյուսը՝ ստորակարգ:

Այսպիսի հասարակություններ դեռ այսօր էլ կարելի է ուսումնասիրել ինչպես ժողովուրդների միգրացիաների և տեղացիների հետ միևնույն փոքր բնակավայրում բնակվելու պատմական իրադրությունների մեջ, այնպես էլ երկու կամ ավելի բնակավայրերի միավորումների միջոցով քաղաքների առաջացման դեպքում: Սակայն հասարակական կայացման այսպիսի ընթացքի տարրեր առաջանում են բոլոր այն դեպքերում, երբ տարբեր մշակույթի, հետևաբար՝ նաև սովորութային տարբեր իրավանորմերի կրողներ մշտապես կամ ժամանակավորապես բնակվում են համատեղ և կամ բաժանում են միևնույն տարածքը: Ժամանակի ընթացքում այս բոլոր համակարգերի ներսում ձևավորվում են ազգակցական, դրացիական, համայնական, հայրենակցական և այլ հարաբերությունների անգիր կանոններ:

Այսպիսով, սովորութային օրենքը.

- ա. մշտառկա է և բխում է բնագրից, ուրեմն և ունի մարդկային խմբի տարրերային կազմակերպման բնույթ,
- բ. վերաբերում է գլխավորապես ինքնապաշտպանությունը և վերարտադրությունը՝ սննդին, ընտանիքին և տարածքին,
- գ. պահպանողական է և ժամանակի ընթացքում սրբացվում է,
- դ. որոշակիորեն հակադրում է անձին և հանրությունը՝ հանրություն միանշանակ և անդրդվելի առավելությունը:

Սովորութային իրավունքն ունի որոշակի թույլ կողմ, որը վերաբերում է անձի և հանրության փոխհարաբերությանը: Նախատեսված լինելով փոքր հանրությունների համար, դրանում յուրաքանչյուր մարդ ունի իր ծագմանը համապատասխանող գործառույթ, թեև գործառույթի ընտրության համար հաշվի են առնվում նաև բնածին անձնային որակները (այստեղից՝ «լավագույնի», հերոսի, անձնային բազմաթիվ այլ որակների խրախուսումների ավանդական ձևերը): Սակայն, ստեղծված լինելով անձին պաշտպանելու համար, այն նույնքան հեշտորեն գոհաբերում է այդ անձին, իսկ բանավոր փոխանցումը և վստահություն-անվստահություն հիմքով անգիր պայմանների վրա խարսխված լինելը, միշտ տեղ է թողնում նոմինալ հավասարություն և փաստացի ակնառու անհավասարություն համար, որը բազմաթիվ անցանկալի կոնֆլիկտների, ուրեմն և՛ անկայունության աղբյուր է: Ի վերջո, ավանդական հասարակության կայունությունը հիմնվում է պատվի, բարոյականության, ամոթի, արդարության, ձյարտության, ծակատագրի և նմանատիպ, ժամանակի մեջ փոփոխվող հասկացությունների վրա, որոնց ձևակերպումը դավանաբանական, փիլիսոփայական և, որ ամենակարևորն է՝

վարքագծային կորիզների ճշտման համար ընտրվում կամ տարերայնորեն անջատվում է իմաստունների առանձին դասը, հոգևորականը (պաշտոնական կամ «ոչ ֆորմալ»): Իբրև վերոհիշյալ հասկացությունների տակ նկատի առնվող անձնային որակների և վարքագծի լավագույն գիտակ, հոգևորականը գրեթե ավտոմատ կերպով իր վրա է վերցնում դատավորի գործառույթը: Ահա թե ինչու ավանդական հասարակության մեջ սովորութային իրավունքի հիմնական ձևակերպումները և, որպես հետևանք, դաստիարակչական հիմնական միջոցներն են առած-ասացվածքները, իմաստուն թևավոր խոսքերը, առակներն ու խրատական գրույցները, անեկդոտներն ու իրապատումները, վիպական հերոսապատումները: Դրանց մեջ կարելի է գտնել պատվի, արժանավորության (ծայրահեղ արտահայտություններն են՝ հերոսությունն ու իմաստնությունը), արդար վարքի, դատաստանի ու պատժի, հանուն հանրության բարեկեցության՝ ինքնազոհաբերության, ինչպես նաև կամքի ուժի վերաբերյալ բազմաթիվ վկայություններ և որոշակի ձևակերպումներ, ներառյալ վարքագծի չափանիշները: Այդ չափանիշներն ստանում են որոշակի խորհրդանիշ-մարմնավորումներ, ինչպես առարկայական, այնպես էլ ժեստային, բառահնչյունային կամ շարժումային ու հպումային (օրինակ՝ գլխարկը կամ գլխաշորը պատիվն է, գլխիկորությունը՝ համեստություն, ձեռք սեղմելը՝ բարին կամենալը, մարմնի որոշակի մասերը մատնանշելը կամ ցույց տալը՝ անարգանք և այլն), որոնք իրենց հերթին դառնում են տվյալ ժողովրդի սովորությունային իրավունքի յուրօրինակ լեզու: Անգիր օրենքի ճանաչումը կապված է ինչպես բանաձևային օրինակները, այնպես էլ խորհրդանիշները լավ իմանալու և դրանց իմաստը ճիշտ արտահայտել կարողանալու հետ: Հետևաբար, ավանդական հասարակության մեջ կարևորագույն գործոն էր համոզիչ խոսքը:

Որոշ հետազոտող-իրավագետներ ընդլայնում են սովորությունային իրավունքի գոյատևման պատմական սահմաններն անցյալի կտրվածքով՝ նայած, թե որքան են կարողանում մղվել անցյալի պատմագիտական, ազգագրական, իրավագիտական նյութի հոլովությունում. «IV-V դարերում ընդունված հայ կանոնական իրավունքի նորմերը, «Ասորական» կոչված դատաստանագիրքը, հայ և օտարազգի պատմիչների առանձին վկայությունները, XII – XIII դդ. հայկական դատաստանագրքերը և ազգագրական նյութերը համոզում են, որ վաղ ավատական շրջանում ամուսնաբանական բնույթի որոշ հարաբերություններ կարգավորվել են սովորութաիրավական նորմերով: Այսօր դժվար է ստուգապես ասել, թե արդելված և վերահաստատված (կամ պահպանված) կարգերից որոնք էին ծագումով սովորութաիրավական և որոնք՝ պետության իրավաստեղծ գործունեության արգասիք: Այնուհանդերձ, թվում է, որ վերահաստատված կամ պահպան-

ված կարգերի մի շոշափելի մասը, այդ թվում՝ հարսանյաց հանդեսով ամուսնությունն օրինականացնելը, ամուսնության դասային բնույթը, ամուսնու առավել իրավունքները կնոջ և զավակների նկատմամբ, դայակության ինստիտուտը և այլն, ունեն սովորութաիրավական ծագում»¹:

Այսպիսով, փուլային զարգացման տեսակետից և պատմականորեն, մարդու իրավունքների ու պարտականությունների վաղնջական ձևը եղել է սովորութային իրավունքը (իմա՝ չգրված օրենքը), որը նախորդել է գրի առնված կամ գրավոր օրենքներին: Բանավոր կամ սովորութային իրավունքը (օրենքը) հոռմեացի իրավաբան Ուլպիանոսը բնութագրել է այսպես. «սովորույթը՝ ժողովրդի լուրջայն համաձայնությունն է, որ ընդունված է երկարատև փորձառություններով. երկարատև սովորույթը պետք է պահպանել որպես իրավունք և օրենք այն ժամանակ, քանի դեռ չկա գրավոր օրենք»²: Բանավոր փոխանցված սովորութային օրենքները գրավոր իրավունքի շրջանում կամ վերածվել են գրավոր իրավունքի (որոշման տեսքով), կա՛մ պահպանվել են առանց գրի առնվելու, այսինքն՝ մնացել սովորույթի, ավանդույթի շրջանակներում: Այդպիսիք են, օրինակ, հարսանեկան, ամուսնարձանեկան կամ առօրյա կենցաղային և հավատալիքային որոշ սովորույթներ, որոնք թեև գրի առնված չեն, բայց հասարակայնորեն տակավին գործուն են և ընդունելի: Այսպես, «ամուսնություն» և «ընտանիք» հասկացությունները պատմականորեն միշտ էլ միմյանց հետ կապված են եղել: Դրանք մարդկային հասարակության կազմավորման հենց առաջին աստիճաններից սկսած անցել են իրենց յուրահատուկ զարգացման գործընթացը և այդ զարգացումը վերջին հաշվով պայմանավորվել է նաև տնտեսական գործոնով և սեփականության ձևերի զարգացմամբ³:

Սովորութային իրավունքը շարունակում է գործել, եթե անկախ պետական և կրոնական այլևայլ հաստատությունների առկայության, ժողովրդի կենցաղը, ապրելակերպն սկզբունքորեն չեն փոխվում: Արաբական ցեղերը, օրինակ, մինչև իսլամացումը ղեկավարվել են դեռևս չտարբերակված իրավական նորմերով, որոնցից է «մոռուռա»-ն, որը կարելի է թարգմանել «տղամարդկություն»: Դա մտել է, օրինակ, բեդվինների պատվոկողբասի մեջ: Արևելագետ Ի. Գուլդիերի բնութագրմամբ՝ իսլամն ինչ-որ չափով արգելակել է «մոռուռա»-ի «հաղթարշավը». «Մոռուռան իր բոլոր ավանդական առաքինությունների՝ խիզախության, պատվի, հյուրասիր-

¹ Ա. Յովհաննիսյան, Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում (IV-IX դդ.), Եր., 1976, էջ 32-34:

² *Дигесты Юстиниана*, Избранные фрагменты в переводе и с примечаниями И. С. Перетерского, М., 1984, с. 115.

³ Ա. Թովմասյան, Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Եր., 1977, էջ 311:

րության և այլնի հետ միասին հին Ջահիլիայի ժամանակաշրջանում ավելի ցայտուն էր, քան իսլամի ժամանակ, որը, որպես կենսակերպի իդեալ, առաջադրել է «դինի» (արաբ. دين-կրոն) պահանջը, որը բուրրովին էլ չի նպաստել մոռուռուայի պահանջների իրականացմանը...»¹: V-VII դարերում և նույնիսկ դրանից հետո արաբական տոհմացեղային հասարակութունում իրավական բնական նորմերը փաստորեն իրագործվել են ոչ թե օրենսդրորեն (օրենքներով), այլ պատվի մասին պատկերացումներով: Նմանատիպ խստաբարո անգիր իրավանորմեր են հայտնի ոչ միայն նախաիսլամական ու իսլամական Արաբիայում, այլև կովկասյան ու եվրոպական ժողովուրդների մոտ և այլուր: Ռազմականացված կենցաղը, որը բնորոշ է քոչվորներին, հետագա նստակեցության օրոք շարունակում է արտահայտվել նմանատիպ էթնոսների ինչպես ծիսական կյանքում, այնպես էլ հավասարապես՝ սովորութային իրավական նորմերում: Այսպես պատմականորեն կայացել են «չարիաթը»՝ կրոնական օրենքը և «ադաթը»՝ չգրված սովորութային օրենքը:

Սովորութային իրավունքով ղեկավարվող գրեթե բոլոր հասարակութուններն ընդունում են. մեծի, անդրանիկի մեծարումը և նրան որոշակի իրավասութուններով օժտելը, նախնիների պաշտամունքը (դրա պարտադիր լինելը) կամ նույնիսկ աստվածացումը, անվան և պատվի նույնացումը: Որոշակի ընդհանրական բնույթ ունի արյան սուրբ լինելը, արյունակցական կապերի սրբացումը, հեղված արյան փոխարեն արյուն հեղելը, փոխհատուցման օրենքը, որը շատ նման է մովսիսական օրենքներին՝ «ատամ ընդ ատաման» (Ել. ԻԱ, 24), արյան դիմաց՝ արյուն, կյանքի փոխարեն՝ կյանք և այլն²:

Սովորութային իրավունքներն արտահայտում են ոչ միայն ընտանիքի, ավագության, տոհմական նախնիներին առնչվող մշակութային երևույթները, այլև բուն տնտեսական գործունեության հետ կապված փոխհարաբերութունները: Մարդ-բնություն հարաբերակցության մեջ, կապված սննդի և բնության ընդհանուր բարիքների պահպանման հետ, սովորութային իրավունքի մեջ են մշակվում այն սկզբունքները, որոնք շարունակելու են գործել չափազանց երկար, անկախ կրոնական և վարչական-տարածքային փոփոխութուններից: Այսպես, առաջին բերքը սուրբ է, առաջին ծնունդը սուրբ է (ուստի և դրանք ընծայվում են Աստծուն՝ նաև ըստ Աստվածաշնչի պատգամների), սուրբ են նաև՝ հացը, անտառը, աղբ-

¹ J. Goldziher, Alte und neue Poesie im Urteil der Arabischen Kritik.- in: Abhandlungen zur arabischen Philologie, 1, Zeiden, 1896, S. 149.

² Մովսիսական օրենքները, լինելով միևնույն կամ գոնե մասն էթնոմշակութային միջավայրի արդյունք, իրենց զուգահեռներն ունեն մեծ Ղուրանում:

յուրը: Այսօրինակ պատկերացումներն օրենքի ուժ ունեին տոհմացեղային հասարակություններում, ուստի և այդ սրբությունների նկատմամբ ամեն մի խախտում կամ ոտնձգություն հայտարարվում էր (և հայտարարվում է առ այսօր) պատժելի: Տարբերությունն այն է, որ եթե նման բարոյաիրավական կատեգորիաները (տաբու-արգելանքները, վարքի նորմերը) սովորութային իրավունքով ղեկավարվող հանրություններում ընկալվում էին որպես հասարակական տվյալ կառույցին (տոհմ, ցեղ, ազգ) պատկանող յուրաքանչյուր անձի և ողջ հանրությունի միակ, անփոփոխելի, անվիճարկելի, բացարձակ պարտականությունը՝ ընդունելու և գործի դնելու առումով, ապա ժամանակակից հասարակություններում ընդունվում է մարդու ազատություն և այլընտրանք ունենալու իրավունքը, որը վերապահված է նրան սահմանադրորեն և մասնավորված գրավոր որոշումներով (օրենքներով): Ըստ ներկա իրավագիտակցության՝ մարդը վեր է տոհմային, ցեղային կամ ազգային պատկանելությունից, թոթափում է շատ տաբուներ, ունի նաև այլընտրանք (այն է՝ ընտրելու քաղաքական, սոցիալական, կրոնապաշտամունքային ու բարոյական պատկերացումների սեփական ուղին՝ ամրագրված քաղաքացիական ու քրեական օրենսդրություններով): Բայց դա ամենևին չի նշանակում, որ այն իրավական նորմերը, որոնք սովորութային իրավունքի համաձայն, տարբեր ժամանակներում գործել են այս կամ այն ժողովրդի մոտ, այլևս կորցրել են իրենց էությունական ու գործառնութային-կիրառական նշանակությունները: Միշտ էլ, օրինակ, արյունը, արյունակցական կապը, դրա հանդեպ հարգանքը մնում են իբրև մարդու ինքնաճանաչման, սրբության և պատվի գիտակցման անհրաժեշտ բաղադրիչ տարրերը¹:

Ըստ Ա. Գուրևիչի՝ «ավանդական բարբարոսական հասարակության կյանքն ընդմիշտ ենթարկվում էր սահմանված կանոններին: Անհատի վարքը խստորեն համապատասխանեցվում էր արգելքներով և խրախուսանքներով հարստացող համակարգին: Մարդը ոչ թե ընտրություն էր կատարում, այլ հետևում էր այն օրինակներին, որոնք հաստատված էին կրոնով, իրավունքով ու բարոյականությամբ»²: Կրոնական նոր համակարգի

¹ Աթեիզմի դարաշրջանի նորմերն ու ազատությունները, այդուհանդերձ, պահանջում են անվերջանալի գրառումներ, վերագրանցումներ, ճշտումներ և մշտական պաշտպանություն, ինչը վկայում է դրանց անկայունության մասին՝ անգիր սովորության նորմերի համեմատ: Վերջինները գործել և գործուն են առանց գրառման, պաշտպանական միջոցառումների և պայքարի, սովորության ուժով: Սովորության և եկեղեցական իրավունքի նորմերը ներկայումս փոխվում են ոչ այնքան գրավոր որոշումների և գաղափարական պայքարի շնորհիվ, որքան կենցաղի արմատական փոփոխման, երկրագնդի բնակչության կտրուկ աճի և հիմքային վերակազմավորման, տոհմաընտանեկան համակարգերի քայքայման պատճառներով:

² А. Гуревич, Категории средневековой культуры, М., 1972, с. 85-99.

առաջ գալը էական փոփոխություն է մտցնում սովորութային իրավունքի մեջ: Այսպես, իսլամի հաստատմամբ արաբական ցեղերը Հնարավորություն են ստանում դուրս գալու տոհմացեղային անվերջանալի ու բազմաքանակ հակասություններից (հողային վեճեր, արյան վրեժ և այլն) դեպի միաստվածային (արաբերեն՝ «թաուհիդի») հավատքի մակարդակը:

Այլ կերպ ասած՝ սկսում է կարևորվել հավատքն առ Աստված, ավելի ստույգ՝ արյունից, արյունակցական ու տոհմացեղային կապերի առաջ դրվում է ամենակարևորը՝ Աստծո ճանաչումն ու ընդունումը, այն Աստծո, որն ստեղծել է մարդուն: Հասկանալի է, որ արաբական ոչ բոլոր ժողովուրդներն են բեղվինական քոչվոր կենցաղից միանգամից անցել իսլամի: Գոյություն են ունեցել զարգացած հեթանոսական պետություններ՝ իրենց զբավոր օրենքներով և պետական կառույցներով, և այսպիսի պետություններից մեկի թագուհին ներկայացված է նաև Հին Կտակարանում (Սաբայի թագուհին): Իսլամ ընդունած այլ ժողովուրդներ ևս, ինչպես պարսիկները, փյունիկեցիները, Միջին Ասիայի և Աֆրիկայի շատ ժողովուրդներ, ունեցել են հզոր և լավ կազմակերպված հեթանոսական պետություններ: Այս դեպքում անցումը սովորութային իրավունքից դեպի նոր կրոնական համակարգի իրավունքը միջնորդված է նաև պետական հին օրենքի հաղթահարումով:

Անկասկած, նմանատիպ գործընթաց է ունեցել նաև հայ ժողովուրդը, որը երկար ժամանակ պահպանելով ավանդական բարքերը, անցել է նաև հեթանոսական պետության փուլը, իսկ հետո՝ ընդունել քրիստոնեություն: Սովորութային իրավունքը շարունակել է գործել, բայց և արմատական փոփոխություններ է կրել կրոնական և պետական կառույցների ներքո, ընկալելով ամեն ժամանակի կրոնական նորմերի մի մասը և դրանց համեմատ տեղափոխելով նորմատիվ վարքի շեշտադրումները: Հայերի չգրված (կարծես ինքնին հասկանալի՝ աքսիոմատիկ բնույթ ունեցող) իրավունքի մասին գրվել են ոչ մեծ թվով ուսումնասիրություններ¹, որոնցում քննարկվում է այդ իրավունքի ծագումը, նույնությունը և տարբերությունն այլ ազգերի հետ, դրա տեղական դրսևորումները, ինչպես նաև ներքին տրամաբանությունը²:

¹ С. Зелинский, Народно-юридические обычаи Закавказских армян, Известия Кавказского отдела Императорского русского географического общества, т. XII, 1898, Ա. Ղլտչյան, Հայ հին իրավունքը, Ազգագրական հանդես (այսուհետ՝ ԱՀ), գ. XXIII, Թիֆլիս, 1912, Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, ԽՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալ, Եր., 1939, հ. 1 և այլն:

² Ա. Ղլտչյանը փորձում է դուրս բերել հայոց սովորութային իրավունքը «արիական» ժողովուրդների ընդհանուր իրավունքից, սակայն այդ փորձերն ինչ-որ առումով անհամոզիչ են հետևյալ պատճառներով. ա. «ընդհանուր» արիական օրենքի որևէ աղբյուր մինչև օրս հայտնի չէ, իսկ հնդարիական և հին իրանաարիական օրենքներն արդեն իսկ չափազանց տարբեր են, առավել ևս՝ դեմոկրատական Աթենքի այն օրենքները, որոնք իբրև օրինակ մեջբերում է Ղլտչյանը, բ. այդ օրենք-

Իրավունքի ու օրենքի ակունքը հին հայոց մեջ ևս եղել է սովորութային իրավունքը: Հայերը ևս մինչ քրիստոնեություն ընդունումն ընտանիքի, համայնքի ու պետության շատ հարցերում կառավարվել են սովորութային իրավունքի նորմերով:

Այդ նորմերի զգալի մասը պահպանվել են մինչև հայոց ազգազրական նյութերի գրառման շրջանը (19-րդ դ. վերջ - 20-րդ դ. սկիզբ): Այսպես, Ջանգեզուրում հարսն իր պատրոնին՝ սկեսրայրին, նույնիսկ իր հորը տեսնելուն պես երեսային գրկից վայր էր դնում կարծես երեսան իրենը չէր: Պատահել էր, որ կամրջի վրա հորը կամ պատրոնին պատահելով՝ մայրը երեսային ձեռքից իջեցրել է, գետնին դրել և մի կողմ կանգնել, երեսային հայրն էլ իր հոր՝ տուն մտնելը տեսնելուն պես դադարում էր երեսային ծնկան վրա նստացրած խաղացնել և անմիջապես իջեցնում էր նրան, կարծես թե իրենը չէր¹: Այսինքն, թե՛ կինը, և թե՛ տղամարդն ամուսնի համարում և խուսափում իրենց կապի ցուցադրումից, որի հետևանքն ու կոնկրետ ապացույցն է ծնված երեսան: Այդ ամուսնը բխում էր այն պատկերացումից, որով մեղք էր համարվում սեռական մերձեցումն առհասարակ, և նորապսակներն առաջաստից հետո, որպես մեղք գործածներ, քառասուն օր պղծված էին նկատվում: Ավելի խորքային հիմքում այդպիսի արգելքներն ուղղված են մի կողմից՝ երեսային կյանքին սպառնացող կիսաառասպելական վտանգներից պաշտպանելուն, մյուս կողմից՝ ընտանիքի հորը, փաստորեն՝ տոհմի հարատևության խորհրդանիշ նահապետին իբրև սրբազան օբյեկտ հարգելուն: Այդ նույն մտայնությամբ պիտի բացատրել, որ որսորդը՝ որսի գնալու և քահանան՝ պատարագ կատարելու նախորդ գիշերը պիտի հրաժարված լինեին սեռական մերձեցումից: Նույն մտայնությամբ հետքերն են պահպանվել այն բանի մեջ, որ տղամարդն իր կնոջը, կինն իր ամուսնուն ուրիշի ներկայությամբ խոսելիս չէր կոչում «իմ կինը» կամ «իմ ամուսինը»: Տղամարդն իր կնոջ մասին ասում էր՝ «մեր հարսը», «Թուժիի աղջիկը», «Գիքիի քուրը» և այլն: Կնոջը, մանավանդ ուրիշների ներկայությամբ, դիմում էին «Ա՛յ Թուժիի ախչիկ», «ա՛յ կնիկ»²: Կինն էլ ամուսնու մասին խոսելիս, սկեսրոջը դիմելիս, ասում էր՝ «տղէտ», տալոջը՝ «ախպէրըտ», տեգեր կնոջը՝ «տէգրըտ», իր ծնողներին՝ «փէսէտ», ուրիշ-

Ների «արիական» ծագման մասին կարելի է խոսել միայն, եթե դրանք հույժ տարբեր են «ոչ արիական» ժողովուրդների մոտ, մինչդեռ հեղինակի նշած բազմաթիվ սովորութային նորմեր առկա են նաև միանգամայն հեռավոր երկրների կենցաղում և գրված օրենքներում, գ. հայերի բուն «արիական» էթնիկ ծագումը բացի լեզվական տվյալներից այլ որևէ բանով չի հիմնավորվում, և նույնիսկ հարևան բուն արիական ժողովուրդների որոշ նորմերի առկայությունը հայոց մեջ կարող է լինել ոչ թե հիմքային, այլ՝ փոխառության արդյունք:

¹ Ս. Լիսիցյան, Ջանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 218:

² Ս. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 219:

ներին՝ «մէր հայրը» կամ «Առաքելի ապէրը», իրեն՝ ամուսնուն պարզորեն «է՛յ» կամ «ա՛յ, հայ»: Ամոթը, որով ավանդաբար հիմնավորվում է ուրիշների ներկայութեամբ խոսելիս միմյանց հատուկ անուններ տալուց խուսափելը, բացատրվում է տղամարդու և կնոջ միջև ամուսնական կապի օրինական-հաստատված լինելով հանդերձ՝ մեղսակցութեան հարաբերութիւն համարելով, երեսան էլ՝ իբրև թե այդ մեղքի կոնկրետ ապացույց¹: Միմյանց անունները տալու արգելքը շարունակվում էր մինչև խոր ծերութիւն, երբ նման «մեղսակցութիւնը» կորցնում էր իր արդիականութիւնը, և վարքի կանոնը՝ ամոթի միևնույն հիմնավորումով, պահպանվում էր որպես համընդհանուր սովորույթ, օրինակելի դառնալով կրտսեր սերունդների համար: Ընտանեկան մի շարք սովորույթներ այսպես անեղծ էին մնում անգամ, երբ դրանց նախնական բովանդակութիւնն իսպառ մոռացվում էր, երբ ամոթը որպես ունիվերսալ հիմնավորում կամ պատիժ (կոնկրետ պատիժը հասարակութեան բաց պախարակութիւնն է) տեղ չէր թողնում կասկածի կամ բացատրութեան որոնման համար, մինչդեռ իրականում այդ սովորույթները, իրենց «անխախտ օրենքի» կարգավիճակով հանդերձ, բխում են արխաիկ հասարակութեան կրոնական պատկերացումներից: Ինչպես տարիների ընթացքում իր արդիականութիւնը կորցրած ամուսինների «մեղսակցութիւնը», այնպես էլ դարերի ընթացքում իմաստը կորցրած զանազան ոգիների, չարքերի հանդեպ զգուշավոր վերաբերմունքը, մոր՝ որպես գերագույն մայրաստվածութեան մարմնավորման պաշտամունքը շարունակում են գործել քարացած սովորութային իրավունքի մեջ, մեծապես պայմանավորելով հայ ժողովրդի ծիսական և առօրյա վարքը:

Գրեթե բոլոր բնակավայրերում, «տոհմ», «գերդաստան», «ընտանիք» բառերն արտահայտվում էին օջախ, տուն, ծուխ բառերով: Ընտանիքի միասնութեան գաղափարը շողկապված էր ընդհանուր տան և ընդհանուր կրակի հետ: Իր հերթին այդ օջախի հետ գործ ունի կերակուր պատրաստողը՝ կինը: Հետևաբար, օջախ-տոհմի բազմաթիվ սովորույթներ պետք է ծագած լինեն մայրիչխանութեան ժամանակաշրջանից: Այսպես, զանգեղուցու ընտանիքում մայրիչխանութեան (մատրիարխատի) փուլից պահպանված բնորոշ սովորութիւններից է մոր նախաձեռնութիւնը՝ տղայի համար հարս ընտրելու²: Դիմումն ուղղված էր աղջկա մորը, որը խորհրդակցում էր նախ և առաջ իր եղբոր հետ, համաձայնութիւն տալուց հետո ապագա գոքանչն էր հովանավոր հանդիսանում փեսացուին: Եկեղեցական կարգը կատարելուց հետո հարսանեկան խնջույքը տեղի էր ունենում աղջկա տա-

¹ Ս. Լիսիցյան, Գշվ. աշխ., էջ 220:

² Ե. Լալայեան, Ձանգեղուր, ԱՅ, գ. Դ, Թիֆլիս, 1898, N 2, էջ 67:

ներ: Ըստ աշխատանքի սեռային բաժանման, խստորեն սահմանագծված էր, որ ամբողջ ներտնային տնտեսությունը կանանց գործն է, իսկ արտաքինը կամ դրսինը՝ տղամարդկանց¹: Այս օրենքը ևս ըստ երևույթին բխում է մայրական օջախի սրբազանությունից, որտեղ տղամարդը «դրսից եկողն» է, ուրեմն և՛ որոշակիորեն օտար, դրսի վտանգները ներս բերող, այսու և պետք է, օրինակ, լվանալ նրա ոտքերը սրբազան տաճար-տուն մտնելուց առաջ: Այստեղ էլ, ընտանիքի ներսում և հատկապես թոնրատանը, որտեղ հաց էր պատրաստվում, առանձնապես շեշտվում էր կնոջ առաջնակարգ դերը:

Տղամարդիկ և կանայք առանձին էին ճաշում, կանայք՝ տղամարդկանցից հետո: Թե՛ խնջուկքների ժամանակ, թե՛ ամենօրյա հացկերություն միայն տան տարեց մեծ կնոջը երբեմն թույլ էր տրվում տղամարդկանց հետ հացի նստելու: Երեխաների կրթությունը հենց սկզբից նպատակ էր դնում աշխատանքի հենց այդպիսի սեռային բաշխումը: Ըստ ավանդական կարգի, աղբյուրից կուժով ջուր բերելը կնոջ, հատկապես տան իգական սեռի փոքրի, այն է՝ փոքր հարսի կամ տան հասունացած աղջկա պարտականությունն էր: Մյուս կողմից, տավար, ոչխար, նույնիսկ հավ մորթելը կնոջ համար անթույլատրելի էր, նա նույնպես չէր մասնակցում որսի, ձկնորսության, առհասարակ ազատված էր այն ամենից, ինչ որ կապված էր կենդանուն մահ պատճառելու հետ, որովհետև կինը կոչված է կյանք տվող լինելու:

Տղամարդու միջամտելը տան ներքին կարգադրություններին համարվում էր տղամարդուն անվայել, ստորացուցիչ, ամոթալի: Կնոջ վրա ձեռք բարձրացնելը նույնպես տղամարդուն չսագող, անվայել բան էր ճանաչվում: Երբեմն բարկացած տղամարդը դիմում էր հայհոյանքի, սակայն ընդհանուր առմամբ կնոջ ներկայությունը հայհոյելն ամոթ էր համարվում:

Փոխարենը տղամարդուն էր պատկանում առաջնակարգ դերը հասարակական կյանքում: Նույնիսկ այրի կինն ամուսնու մահից հետո անձամբ չէր մասնակցում հասարակական ժողովներին: Նրա փոխարեն, որպես նրա շահերի պաշտպան, հանդես էին գալիս խնամակալն ու հոգաբարձուն: Ոչ միայն հարսանեկան երթի ժամանակ նորահարսը գնում էր նորափեսայի ետևից, այլև արդեն մի քանի երեխաների մայր դարձած կինը թե՛ փողոցով գնալիս և թե՛ որևէ տուն հյուր մտնելիս պետք է գնար իր ամուսնու ետևից, դրանով շեշտվում էր տղամարդու և կնոջ դիրքի տարբերությունը հասարակության մեջ:

¹ Ուշագրավ է, որ հաստատվող նոր սոցիալիստական կենցաղն սկզբնական ժամանակներում հանդիպել է տարեց կանանց խիստ դիմադրությամբ, քանի որ նրանք փորձում էին պահպանել տանից կնոջ դուրս չգալու և հողամշակման ու անասնապահության հետ կապված աշխատանքներից չմասնակցելու հին կանոնը:

Բացի սեռային բաժանումից, ընտանեկան կյանքում խստությամբ պահպանվում էր աշխատանքի հասակային բաժանումը: Դարերի ընթացքում ձևավորվել էր կարգ. յուրաքանչյուր հասակային խումբ ուներ իր պարտականությունները: Տղամարդկանց գլուխը, ղեկավարը տան մեջ համարվում էր տան ավագը¹, որը կամ պապն էր, իսկ նրա մահից հետո՝ նրա ավագ եղբայրը, կամ՝ հոր և հորեղբայրների բացակայության միջոցին՝ եղբայրներից ավագը: Նրա ներկայությամբ ոչ միայն հարսները չէին կարող նստել, այլև կրտսեր բոլոր տղամարդիկ, որոնք պետք է տեղերից վեր կենային նրա տուն մտնելուն պես և կարող էին նստել միայն նրա կարգադրությամբ: Միայն պապի ավագ եղբայրը, եթե ինքն էլ արդեն հասակավոր էր, նստած էր մնում նահապետի մտնելու բոլորին: Տան գլխավորն էր, որ երեկոյան հացից հետո մանրամասնորեն մշակում էր հաջորդ օրվա աշխատանքների ծրագիրը և կատարում էր դրանց հերթական բաշխումը: Նա էր, որ օրվա վերջում լսում էր հաշվետվություն՝ ով ինչպես է կատարել իրեն հանձնարարված պարտականությունը, եթե աշխատանքը նրա աչքի առաջ կատարված չէր եղել: Նա էր լսում և տանտիկնոջ պահանջները, թե դրսից ի՞նչ պետք է բերվի տուն, ցորենը ջրաղաց տարվի, փայտը բերվի, գնումներ կատարվեն և այլն: Եթե կանանց մեջ վեճերի դադարեցումը տանտիկնոջ գործն էր, ապա տղամարդկանց մոտ առաջ եկած դժգոհությունները քննում էր տան մեծ տղամարդը:

Այս հիերարխիան նկատվում է հատկապես կապված երկրագործական աշխատանքների հետ: Կրտսերները լինում էին հոտաղներ, տավարածներ: Հայտնի էր, թե ո՞վ է գութանի մածը ղեկավարողը, ո՞վ՝ այս կամ այն գուլյգեզներին քշողը: Սերմնացանը միշտ լինում էր տան գլխավորը:

Գերդաստանում կանանց խմբի գլխավորը տատն էր, նրա մահվան դեպքում՝ պապից հետո հաջորդությամբ՝ ավագ եղբոր կինը, այնուհետև՝ ավագ որդու կինը կամ մեծ հարսը: Եթե պապը մեռնում էր տատից առաջ, տատը մնում էր իր դերում, իսկ պապի իրավասությունն անցնում էր ավագ որդուն: Երկրորդ տեղը կանանց մեջ պատկանում էր ավագ հարսին, որին տատը դեռևս կենդանության օրոք պատրաստում էր իր հաջորդը լինելու, մանավանդ, որ նա մշտապես իր օգնականն էր լինում հաց թխելու և կերակուր եփելու ժամանակ:

Ըստ ավագության կարգի, աշխատանքի բաժանումը կանանց միջև վերաբերում էր առաջին հերթին սննդին, ինչպես տղամարդկանց մեջ՝ երկ-

¹ Հայկական գերդաստանի մեջ ավագը մեծ իշխանություն էր վայելում, կաշկանդված չէր կարևոր դեպքերում գերդաստանի մյուս անդամների հետ խորհրդակցելու պարտականությամբ, ինչպես հարավսլավոնական «գաղութային» մեջ էր, ոչ էլ ցրանց առջև հաշվետու էր, կամ երբեմն հեճց ցրանց հավանությամբ էր ընտրվում, այլ ոչ թե գերդաստանի ավագներից ընդունակ անդամներից:

րագործությունը: Կանանց մեջ աշխատանքի բաշխումը դարերի ընթացքում այն աստիճանի որոշակի էր սահմանված, որ սկեսուրը մեծ դժվարություններով էր այդ կարգը խախտում: Կերակուր բաժանելը տան ավագ կնոջ մենաշնորհն էր: Մեծ շերեփը նրա ձեռքին էր լինում: Տատի և ավագ հարսի արտոնություններն էին պանիր մերելը և ճախարակ մանելը: Երկրորդ հարսի պարտականությունն էր՝ ալյուր մաղելը, խմոր հունցելը, հաց բաց անելը, երրորդինը՝ տունն ավելելը, սեղան պատրաստելը, կերակուր մատուցելը, ամանները հավաքելը և լվանալը, երեկոյան տղամարդկանց ոտքերը լվանալը, նրանց լվացվելու ժամանակ ձեռներին ջուր ածելը և երեսուրբիչ պահելը, հանդի աշխատավորներին կերակուր տանելը: Եթե տան մեջ լինում էր մի հարս ևս, այս պարտականությունների մի մասն անցնում էր նրան¹:

Համակարգված էր նույնիսկ քնելու նախապատրաստությունը: Շորերը հանում էր նախ տան մեծը: Փոքր հարսն օգնում էր շորերը հանել և տրեխներն արձակել, որից հետո հանվում էր ավագ եղբայրը, ավագ որդին և այսպես հերթով բոլոր տղամարդիկ: Ապա կարգը գալիս էր կանանց: Նախ պառկում էր սկեսուրը, որին հանվելիս օգնում էր կրկին ամենակըրտսեր հարսը: Փոքր հարսը հանգցնում էր ճրագը և անաղմուկ պառկում ամուսնու կողքին:

Ընտանեկան ավանդական նորմերից էր նաև հարսների չխոսկանությունը, այսինքն, խոսքային ուղղակի հաղորդակցություն արգելքը որոշակի սեռատարիքային խմբերի ներկայացուցիչների միջև: Հարսները «հարսնություն էին անում», այսինքն՝ չէին խոսում սկեսրայրի և մեծ տազրերի հետ երբեմն մինչև մահ, սկեսուրի հետ՝ առնվազն 10 տարի, բացի առաջին հարսից, որը նրա անձնափոխանորդն էր համարվում և հարսնություն էր անում մինչև երկրորդ հարսին տուն բերելը: Չէր խոսում փոքր տազրերի և տալերի հետ՝ կես տարուց մինչև չորս տարի: Երբ հարկ էր լինում խոսելու, դիմում էին դիմախաղին, ժեստերի լեզվին² կամ մանկահասակ տալի միջնորդությունը և կամ անուղղակի խոսքին՝ ցածր, բայց պարզ լսելի ձայնով իրենց ասելիքն ուղղում էին փոքր երեխաներին, որոնք երբեմն դեռ թոթովել անգամ չէին կարողանում: Բայց հարսները խոսում էին

¹ Ս. Լիսիցյան, Եզվ. աշխ., էջ 221-222:

² Հարսնության միջոցին խոսողը բառերի մեծ մասը փոխարինում էր շարժումներով. այսպիսով ժեստերի լեզուն պահպանվում էր գանգեզուրցի կանանց մեջ շատ երկար ժամանակ իր ծավալուն վիճակով: Ազգագրական մյուս շրջաններում ևս գոյություն ունեւր այդպիսի լեզու: «Կինետիկ» կամ «գծային», այսինքն, հիմնականում ձեռքերի ժեստերով լեզվին իր աշխատություններում անդրադարձել է դեռևս Ն. Մառը: Նա շեշտել է Կովկասի ժողովուրդների, մասնավորապես հայերի մեջ չխոսկան հարսների գործածած ձեռնալեզվի արխաիկությունը (տես՝ Ն. Մառ, Ընտիր երկերի ժողովածու, Եր., 1949, էջ 234-236):

միմյանց հետ սկեսուրի կամ մեծ հարսի բացակայության ժամանակ, որովհետև բացի սկեսուրից մեծ հարսի առաջ էլ հարսնություն էին անում¹: Չխոսկանության սովորությունը տարածված էր հայաբնակ գրեթե բոլոր գավառներում:

Ավագության իրավունքը որոշ չափով պահպանում էր իր ուժը նաև ընտանիքի բաժանման միջոցին, գույքի բաշխման ժամանակ: Բաժանումը, այսինքն, մեկ խոշոր տան անդամներից փոքր օղակների (ընտանիքների) առանձնացումը, ընկալվում էր որպես դժբախտություն և ամոթալի էր նահապետի համար: Այդուհանդերձ հենց բաժանումն էր ակնառու կերպով իցույց դնում իրական իրավահարաբերությունները նահապետական գերդաստանի ներսում: Բաժանվում էին սովորաբար տան մեծի մահից հետո: Հնում եղբայրներից ոչ ոք իրավունք չունեին առանձնանալ ընտանիքի կազմից հոր և մոր կենդանության օրոք²: Բաժանվելու պահանջը մեծ մասամբ առաջ էր գալիս գերդաստանի անչափ աճելու դեպքերում: Բաժանվում էին նաև գերդաստանի առանձին ճյուղերի միջև ծագած անհամաձայնությունների հետևանքով, երբ տան ավագը չէր կարողանում իրականացնել կառավարումը: Պատահում էր, որ անջատվում էին նաև ընտանիքի այն անդամները, որոնք ունեին սեփական արդյունք դրսում կատարած իրենց աշխատանքներից և այդ եկամուտը չէին կամենում դնել տան մեծի տրամադրության տակ և բաժանել ընտանիքի այլ անդամների հետ: Բաժանումը տեղի էր ունենում գյուղի, համայնքի ավագի (տանուտերի) կամ նրա ներկայացուցչի և մերձավոր բարեկամների մասնակցությամբ: Առանձնացվում էին նախ և առաջ հարսների օժիտները, որոնք նրանց առանձնակի սեփականություն էին համարվում, ապա տան աղջկա բաժինը, որն ապագայում պիտի տրվեր նրան որպես օժիտ, նույնպես և մոր բաժինը: Եթե եղբայրներից մեկն ու մեկն ամուսնացած չէր, առանձնացնում էին ազգություն ավելորդ բաժինը (այստեղ՝ ազգապիրըջօն), որն ամուսնացած եղբայրների հարսանիքներին արված ծախսերի միջինն էր կազմում: Մայրը մեծ մասամբ մնում էր կրտսեր որդու հետ՝ նրա անփորձ կնոջն օգնելու համար, սակայն ընտրություն ունենալով ավագ տղայի ընտանիքում՝ ավագ հարսի հետ տնտեսությունը վարելով: Սովորաբար առանձնացվում էր նաև ավագ եղբորը տրվող ավելորդ մասը, որը կոչվում էր մեծահարկ: Դա լինում էր ապրանքից՝ անասունից կամ հողից մի հավելյալ մաս իր ավագության համար: Մնացած ամբողջ գույքը՝ տնային սարքավորումը, գոր-

¹ Ե. Լալայեան, Ըշվ. աշխ., էջ 95:

² Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այսուհետ՝ СМОМПК), вып. XIII, N 2-3, 1936, с. 7-38:

ծիքները, անասունը և հողը բաժանվում էր հավասար ըստ եղբայրների թվի: Հայրը, եթե կենդանի էր, իրավապես հավասարվում էր եղբայրներից մեկին: Երբ այդ հավասար բաժինները որոշվում էին, վերջնական բաշխումը կատարվում էր վիճակահանութայամբ (այստեղ՝ «չօփ հանել»): Չոփ հանելու համար կանչում էին մի երեխայի, երբեմն քահանային:

Բաժանման էր ենթարկվում ամբողջ գույքը, բացի առանձին անդամների սեփականությունից: Ըստ սովորութային ժառանգական իրավունքի, անձնական սեփականություն էին համարվում կանանց զարդերը և ընտանիքի արական սեռի անդամների զենքը: Բաժանվող բոլոր իրերից ժառանգների ընդհանուր օգտագործմանը մնում էր միայն ջրաղացը: Հայոց մեջ ուղղակի ժառանգ են համարվել արու զավակները, որոնք ժառանգում էին շարժական և անշարժ գույքը, ինչպես և հողաբաժինները: Աղջիկները, եթե եղբայրներ ունեին, հայրական գույքից ոչինչ չէին ստանում: Իսկ եթե մեծ գերդաստանում արու զավակներ չկային, ապա մահացած հոր գույքն անցնում էր կնոջն ու աղջիկներին, ընդ որում՝ մեռած սեփականատիրոջ իրավունքներից օգտվում էր նրա կինը:

Որդուն առանձնացնելիս, հայրը պարտավոր էր տալ նրան անկողին, խոհանոցային պիտույք, անասունի մի մասը, ընդ որում՝ բաժինը, չափը որոշվում էր իր հայեցողությամբ՝ առանց որդու պահանջի կամ միջամտության: Հողաբաժիններից, գլխավորապես վարելահողից, հայրը պետք է բաժին հաներ բաժանվող որդուն այնքան, որքան նրան հասնում է հողի կամ հարկերի բաշխման համար ընդունված սովորույթի հիման վրա. հակառակ դեպքում հասարակությունը (համայնքի ինքնակառավարման մարմինը, խորհուրդը) իրավունք ունի իր հայեցողությամբ հոր հողերից կտրել և այդ կտորը տալ բաժանված որդու օգտագործմանը: Եթե բաժանված որդին հոր կենդանության օրոք չէր ստացել անշարժ գույքի իր լիակատար բաժինը, նա իրավունք ուներ այն ստանալու հոր մահից հետո, սակայն շարժական գույքից նա ոչինչ չէր ստանում: Վերջինը մնում էր եղբայրներին, որոնք ապրել են հոր հետ նրա կենդանության օրոք:

Եթե բաժանված եղբայրները կրկին միանում էին և մեկ տնտեսություն էին կազմում (մի բան, որ հաճախ էր պատահում), կամ եթե հորեղբոր որդիները որբանում էին, ապա երկրորդ անգամ բաժանվում էր միայն այն, ինչ-որ ձևով էին բերել միասին ապրելու միջոցին¹: Հայոց օջախն այսպիսով բաժան-բաժան էր լինում:

Ինչպես նշվեց, ընտանիքի, ազգակցության գաղափարներն արտահայտվում էին տան կրակատեղի-օջախի կատեգորիաներով: Երբ մեկը բա-

¹ Ս. Լիսիցյան, Գշվ. աշխ., էջ 224-225:

ժանվում էր և իր համար կառուցում էր առանձին տուն, վերջինիս մեծն էր վառում նոր օջախի կրակը հայրական տնից բերած կրակով: Սրանով շեշտվում էր, որ թեև բաժանվել են, բայց օջախի ծխական-խորհրդանշական ամբողջությունը պահպանվում է, արյունակցական, ազգակցական շաղկապը մնում է՝ համապատասխան պարտավորություններով հանդերձ: Այդ ամբողջությունը և միասնությունը դրսևորվում էր տակավին երկար ժամանակ նրանց տնտեսական և կենցաղային փոխհարաբերություններում, ծխական վարքի, հատուկ իրադրությունների դեպքում կատարվող գործողություններում: Ի դեպ, եղբայրների մեջ ավագություն կարգի վրա հիմնված հարգանքը չէր դադարում նաև բաժանվելուց հետո:

Տանտիրոջ մահից հետո, ո՛չ կինը, ո՛չ էլ աղջիկները չէին զրկվում հողաբաժիններից, դրանցից աղջիկներն օգտվում էին մինչև ամուսնանալը, իսկ կինը՝ մինչև մահը կամ երկրորդ անգամ ամուսնանալը: Աղջիկների ամուսնությունից դեպքում նրանց հողաբաժիններն անցնում են նրանց ամուսիններին, եթե միայն սրանք նույն հասարակության անդամներ էին: Հակառակ դեպքում համայնքը նրանցից օտարացնում էր այդ հողը: Ասվածը վերաբերում էր միայն վարելահողերին, մինչդեռ այգիները, շենքերն անցնում էին նախկին տիրոջ դստրերի ամուսիններին առանց որևէ սահմանափակման:

Եթե մահացած սեփականատերն ուղղակի ժառանգ չուներ, ապա հողաբաժինները (վարելահող, խոտհարք և այլն) համայնքն օտարացնում էր, իսկ մնացածը (այգիներ, ջրաղացներ, տնտեսական այլ կառույցներ) անցնում էին մերձավոր ազգականներին:

Չբաժանված եղբոր մահից հետո գույքի նրա բաժինը մնում էր նրա կենդանի մնացած եղբոր տրամադրության տակ, որը պետք է հոգ տաներ մեռածի կնոջ և զավակների մասին: Եթե մահացած եղբորից հետո մնում էին արու գավակներ, նրանց բաժանման միջոցին շարժական և անշարժ գույքը, նույնպես և հողաբաժինները կիսվում էին: Սակայն եթե մնացած էին լինում իգական սեռի զավակներ, ապա բաժանման միջոցին նրանք ստանում էին շարժական գույքի և այգիների կեսը, իսկ հողաբաժիններն ամբողջությամբ անցնում էին կենդանի մնացած եղբորը: Մեռած եղբոր կինը, զավակներ չունենալու դեպքում, վերադառնում էր հոր տուն՝ հետը տանելով միայն իր օժիտը:

Այն դեպքերում, երբ ընտանիքում ժառանգ չէր լինում՝ լրացվում էր որդեգրությունը, որին օրինական ձև էր տրվում գյուղի համայնքի գիտությունով: Մահացած մտերիմ ազգականների երեխաների մասին հոգ տանելը սովորութային իրավունքի նորմերի տեսակետից բուն որդեգրություն չի համարվել, և այն վերաբերել է միայն որդեգրողի հետ ազգակցական կապ չունեցողներին: Որդեգրածն ստանում էր հարազատ գավակի բոլոր իրա-

վունքները և կապվում էր ընտանիքի հետ նույն պարտականություններով: Նրան էին անցնում և մեռած սեփականատիրոջ հողաբաժինները, նույնիսկ եթե նա ծնունդով այդ հասարակության անդամ չէր: Որդեգրում էին ինչպես տղա, այնպես էլ աղջիկ երեխաներ: Երկու դեպքում էլ որդեգրածը չէր կարող ամուսնանալ ընտանիքի անդամի հետ և նա հավասարվում էր ընտանիքի արյունակից ազգականներին:

Գոյություն ունեւր ոչ արյունակից բարեկամների հետ ազգակցական կապեր ստեղծելու ևս մեկ ձև: Զանգեզուրում, օրինակ, դա երիտասարդները միջև «դադօ» կոչվող ինստիտուտն էր, երբ հասակակից երիտասարդները ծիսական միջոցներով դառնում էին եղբայրներ կամ քույրեր: Այդ միջոցով ավելի հաճախ իրար հարազատանում էին աղջիկները: Փաստերը միանշանակ վկայում են, որ սովորութային այս նորմը իր հովանավորության տակ էր վերցրել եկեղեցին, ճիշտ այնպես, ինչպես ամուսնությունպսակադրությունը: Այն աղջիկները, որոնք կամենում էին «քուրանալ», նախ իրար «խօնչանէր» (նվերներ) էին ուղարկում և ապա Զատիկին գնում էին եկեղեցի և զույգ-զույգ կանգնում էին սեղանի առջև՝ վառած մոմերը ձեռքներին, այնուհետև զույգ-զույգ մոտենում էին սուրբ սեղանին, Ավետարանը համբուրում, խաչհամբույր-զոհաբերություն մատուցում, քահանան էլ իր օրհնություններն էր տալիս: Այնուհետև, այդ զույգերը քույրերից ավելի մտերիմ էին դառնում, միմյանց «դադօ» էին անվանում, փոխադարձաբար օգնում էին, միասին գնում էին՝ ջրի, լողանալու, զբոսնելու, ուխտի և այլն: Մի քահանա կամենալով ցույց տալ, թե իր ժողովրդի համար ինչ մեծ աշխատանք է տարել պարծենում էր. «Էհ, քանի՛ - քանի՛՛ աղջիկ եմ ես էս վարագույրի առջև քուրացրել»¹:

Տղաները նույնպես «ախպէրանում» էին: Ե. Լալայանը անդրադառնում է կարսեցիների «ողջույն-աղբէր» դառնալու արարողությանը, երբ պատարագի պահին երիտասարդները երկու տարբեր խորանների դիմացից մոտենում էին սեղանին, ողջունում իրար, իսկ հետո դուրս էին գալիս եկեղեցու գավիթը, կտրում իրենց աջ ձեռքերի ճկույթները և ծծում միմյանց արյունը²: Որպես համեմատություն, սովորութային իրավունքի հայտնի դրսևորում էր քրդերի մեջ տարածված, բայց և հայերին վերաբերող «քիրվայությունը»³, որն ավելի զորեղ կապ էր, քան արյունակից եղբայրությունը: Հայտնի են դեպքեր, երբ քիրվայի համար երիտասարդը հակառակվել է անգամ տոհմի նահապետին: «Քիրվայությունը» ոչ միայն ազ-

¹ Ս. Լիսիցյան, Գշվ. աշխ., էջ 225:

² Ե. Լալայան, Ծիսական կարգերը հայոց մէջ, ԱՅ, գ. XXI, 1911, էջ 175:

³ Գ. Յալաջյան, Դերսիմի ազգագրական նյութեր, ՅԱԻ արխիվ, թրթ. № 59, 5թ, թ. 38-39:

գակցական, այլ առավել՝ ռազմական միությունն էր, որի մեջ սովորական էր մեկը մյուսի համար սեփական կյանքը զոհաբերելը: Ի տարբերություն եղբայրանալու ծեսին, քրիվայությունը կրոնի տարբերության պատճառով չէր հաստատվում հայոց եկեղեցական արարողությամբ:

Ուշագրավ երևույթ էր հայոց մեջ, երբ «քուր ու ախպէր» էին դառնում աղջիկն ու տղան (ընդունված էր, օրինակ, Հին Բայազետից՝ Նոր Բայազետ (Կամո) գաղթած հայերի մեջ): Աղջիկն ու տղան գալիս էին եկեղեցի և քահանայի առջև Ավետարանը համբուրում: Արդյունքում՝ ոչ ոք իրավունք չունեի որևէ սիրային կապ կասկածել նրանց փոխհարաբերությունների մասին: Տղան եղբոր պես պաշտպանում էր աղջկան բոլոր դեպքերում, բայց և զրկվում էր նրա հետ ամուսնանալու իրավունքից: Նրանք ունեին փոխադարձ պարտավորություններ. ամեն բան իրար պիտի ասեին, ամեն աշխատանքի մեջ իրար օգնեին, ամեն ուրախություն և փորձանք իրար հետ բաժանեին¹:

Ընդհուպ մինչև 20-րդ դ. սկիզբը լավ պահպանված սովորութային օրենքները շատ մասնակի կիրառվում են նաև մեր օրերում, որոնք հայոց էթնիկական դիմագծի կարևորագույն բնութագրիչներ են:

¹ Ս. Լիսիցյան, Գշվ. աշխ., էջ 225-226: